«ԿԱՐՄԻՐ ՋԻՆՎՈՐ»-Ի ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՐԱՀԱՆԳ

ԲԳԿԲ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ ՈՒ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՀԱԿԱՀԱՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*

ՑԵՎԵՎԱՆ—1933

628
Հ-99

14.06.201
13.957
628
39
04 AUG 2010

«Հաստատում եմ»
ԲԴԿԲ ԲՏՎ պետ՝ Լեչի
29 սեպտ. 1932 թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն հրահանգը գիտենալը և կատարելը պարտադիր է ամբողջ հրամայակազմի, կարմիր բանակայիների ու կամավարձ աշխատողների համար:

2. Սույն հրահանգի հետ ծանոթացումը կատարվում է այդ հրահանգի ընթերցման, պարապմունքներում մշակելու և աչքի ընկնող տեղերում փակցնելու միջոցով:

II. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Հակահրդեհային պահպանության գործը կազմակերպելու և ղեկավարելու համար յուրաքանչյուր զորամասում, հիմնարկում պետակազմի անձերից նշանակվում է ըստ համատեղության հրդեհային պահպանության պետ՝ համաձայն ԽՍՀՄ ՀՈՒ 1932 թ. № 060/գ հրամանի:

Ծանոթություն.—Հրդեհային պահպանության պետ նշանակելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն անձանց ոգտագործման հնարավորությունը, ովքեր նախքան զինվորական ծառայությունն աշխատել են հրդեհային պահպանության մեջ:

4. Ապահովելու համար հրդեհային պահպանության պետի ռեալ աշխատանքը, վերջինս պետք է ազատվի պահպանություններ ու վերակարգեր կրելուց:

5. Հրդեհային պահպանության պետը անմիջորեն յենթարկվում է զորամասի, հիմնարկի պետին, վորին և զեկուցում է հակահրդեհային միջոցառումների բոլոր չկատարման դեպքերի մասին:

6. Յուրաքանչյուր զորամասում, հիմնարկում կազմակերպվում է հրդեհաշեջ խումբ (դրուժինա):

7. Ժամանակին և արագ կանչելու համար մոտակա քաղաքացիական հրդեհաշեջ կազմակերպություններին, պետք է ունենալ քաղաքային հեռախոսական կապ, իսկ ավելի լավ է ունենալ անմիջական կապ քաղաքային հրդեհաշեջ խմբի հետ:

8. Հրդեհաշեջ տաղնապներ սարքելու և հրդեհի բռնկման վայրը կանչելու համար զորամասի, հիմնարկի հրդեհաշեջ խմբին, պետք է սարքավորվեն ազդարարության այնպիսի միջոցներ, վորոնք ապահովում են հրդեհաշեջ խմբի արագ հավաքը (հեռախոսային կապ, էլեկտրական նշանարարություն, զանգեր և այլն):

ՀԱԽ — ՍՍՌ
Ա. Մասիսյան

9. Բոլոր հեռախոսային ապարատների մոտ պետք է պարզ մակագրություններ լինեն, վորոնք ցույց տան մոտակա հրդեհաշեջ խմբի հեռախոսի №-ը:

10. Հրդեհաշեջ ոգնությունը կանչել բոլոր դեպքերում, յերբ մինչև իսկ բռնկումը չնչին է:

11. Ամբողջ հրդեհաշեջ ինվենտարն ու սարքավորումը պետք է պահել միշտ սարքին ու պատրաստ և վոչ մի դեպքում չփակել դեպի նրանց տանող ճանապարհները:

12. Հրդեհաշեջ ջրանցքի, ջրհորների կափարիչները վոչնչով չպետք է ծածկված լինեն, ձմեռը պետք է շարունակ այդ կափարիչները մաքրել ձյունից: Նրանց տեղն արագ գտնելու համար պետք է ունենալ մակագրություններ, վորոնք ցույց տան այդ ջրհորների—ճիշտ տեղը:

13. Ունենալ հարմար ճանապարհներ դեպի ջրամբարներն ու բնական ջրաղբյուրները, վոչ մի դեպքում վոչնչով չփակելով այդ ճանապարհները:

14. Ոգտագործել հրդեհաշեջ ինվենտարն ու սարքավորումը միայն հրդեհաշեջման նպատակների համար, կտրականապես չթույլատրելով, վոր այդ ոգտագործվի այլ նպատակների համար:

III. ԿԱՆԽԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Հրդեհը կանխելու նպատակով կտրականապես արգելվում է.—

15. Իրերով փակել դեպի շենքերը տանող մուտքերը և դեպի ոբյեկտի տերիտորիան տանող ճանապարհները:

16. Ծանրաբեռնել կտուրների տակի վերնատները (չերդակները) զանազան իրերով: Վերնատները պետք է ազատ լինեն, նրանց դռները պետք է շարունակ փակ լինեն և բանալիները պահվեն զորամասի որապահի մոտ:

17. Արգելվում է սանդուղքների տակ պահարաններ պատրաստել և իրեր դարսել:

18. Արգելվում է վառարաններ վառելն առանց զննելու և նախքան վառարաններ վառելու սեղոնը՝ վերացնել այն բոլոր թերությունները, վոր կարող են հրդեհ առաջացնել, այն է՝

ա) յերբ վառարաններում կամ ծխնելույզներում կան ճեղքեր.

բ) յերբ վառարանների առաջ չկան թիթեղներ,

գ) յերբ չկան պատշաճ անջատիչներ փայտե մասերից.

դ) յերբ անսարքին են կամ բացակայում են վառարանների դռնակները:

Ծանոթություն 1.— Ժամանակին հայտաբերելու համար ճեղքերը ծխնելույզներում, վերջիններս պետք է սպիտակացրված լինեն:

Ծանոթություն 2.— Վառարանները պետք է վառել բացառապես հատուկ նշանակած անձնավորության հսկողությամբ:

19. Արգելվում է ոգտագործել ելեկտրական դիծը՝

ա) յերբ բացակայում են չեռպսելներն ու մեկուսիչները (վիկլյուչատել).

բ) յերբ չկան պահպանական խցաններ (վոչ մի դեպքում թույլ չտալ խցանը փոխարինել ելեկտրալարերի փունջերով).

գ) յերբ կան մերկացված լարեր.

դ) յերբ կան այլ անսարքություններ.

20. Արգելվում է ոգտվել նավթի լուսավորությամբ, յերբ լամպերի նավթատեղերն անկայուն են կամ ապակուց են:

21. Արգելվում է լամպերը կախել առաստաղից, առանց առաստաղի թիթեղ խփելու՝ պաշտպանելու համար լամպի ճառագայթներից:

22. Արգելվում է ծխել պահեստների շենքերում, արհեստանոցներում, դարաժներում, ակումբներում, լենանկյուններում, ելեկտրակայաններում, ախոռներում, շինարարությունների վայրերում, խոտի, ծղոտի, վառելանյութի և այլ դյուրավառ նյութերի բացոթյա պահպանման վայրերում:

Ծանոթություն 1.— Այն վայրերում, վորտեղ ծխելը չի թույլատրվում, պետք է կախված լինեն ցուցանակներ՝ «Ծխելն արգելվում է»:

Ծանոթություն 2.— Ծխելու համար պետք է հատկացվեն հատուկ վայրեր, վորտեղ պետք է լինեն ջրով ուրնաներ (ամաններ) ծխախոտի մնացորդները լցնելու համար:

23. Արգելվում է միջանցքներում և բնակելի սենյակներում պրիմուս վառելը:

24. Արգելվում է պրիմուսների ու լամպերի նավթատեղերի մեջ, բացի զուտ կերոսինից (սպիտակ նավթից), բենզին, դիզելին և այլ դյուրավառ նյութեր լցնելը:

25. Արգելվում է լամպերը, պրիմուսները նավթ լցնել, յերբ նրանց մեջ կա բաց կրակ:

26. Արգելվում է ժամանակավոր յերկաթե ու աղյուսե վառարաններ դնել, առանց յուրաքանչյուր առանձին դեպքում թույլտվություն ստանալու բնակարանային մասից ու հրդեհաշեջային հսկողությունից:

27. Արգելվում է խարույկներ վառել, աղբ, տաշեղներ այրել ոբյեկտի տերիտորիայի վրա:

28. Արգելվում է ոգտվել շարժական հնոցներից՝

ա) քամու ժամանակ.

բ) գիշերը.

գ) քարե շենքերից 10 մետրից և փայտե շենքերից 20 մետրից պակաս տարածության վրա.

դ) առանց մշտական հսկողության աշխատանքի ամբողջ ժամանակ.

ե) առանց նախապես ապահովելու հրդեհաշեջ միջոցները (հրամարիչ, ջուր):

29. Արգելվում է դուրս թափել չհանգցրած կրակը կամ չսառած մոխիրը:

30. Արգելվում է ոգտվել շարժական խոհանոցներից, շենքերից 20 մետրից և դյուրավառ նյութերի պահպանման վայրից 40 մետրից պակաս տարածության վրա:

31. Արգելվում է դարբնոցներում ոգտվել հնոցներից, առանց ունենալու մետաղե ծածկոցներ (զոնտեր) և ծխնելույզներ:

32. Արգելվում է բնակելի շենքերում պահել յուրաքանչյուր ընտանիքի համար 8 լիտրից ավելի նավթ և 2 լիտրից ավելի բենզին, արգելվում է նավթն ու բենզինը պահել ապակե ամաններում և չխցանած բիտոններում:

Ծանոթություն.— Մեծ քանակով նավթ ու բենզին պահելը թույլատրվում է միայն հատուկ շենքերում, յուրաքանչյուր դեպքում համաձայնեցնելով այդ հրդեհաշիջային հսկողության հետ։

33· Արգելվում է սև նավթը պահել ստորերկրյա բակերի կամ հատակների մեջ՝

ա) շենքերից կամ դյուրավառ նյութերից 10 մետրից մոտ տարածության վրա։

բ) յերբ նավթը պահվող վայրի մոտ չկա այնքան շոր ավազ, որը բավականացնի հրդեհաշիջման միջոցներ ձեռք առնելու համար։

գ) չլցանած կամ սնոտաբք ամանում և առանց պահպանման վայրն ավազ լցնելու։

34· Արգելվում է սլիգ (ներկի յուղ) պահել շենքերում, բացառությամբ դրա համար հատկացրած շենքի, որտեղ պետք է պահպանվի շենքի լիակատար մաքրություն։

35· Արգելվում է չհանդցրած կիրը պահել՝

ա) բացոթյա ու ծածկոցի տակ։

բ) այլ դուրքի պահպանման շենքերում։

գ) անսարքին (կաթող) կտուրներով շենքերում և

դ) այն բոլոր շենքերում, որոնք պաշտպանված չեն մթնոլորտային տեղումներից ու գետնի տակի ջրերի։

36· Կարբիդ կալցիումի պահպանումն արգելվում է՝

ա) այն շենքերում, որոնք պաշտպանված չեն խոնավությունից (մթնոլորտային տեղումներ, գետնի տակի ջուր)։

բ) այն շենքերում, որոնք ունեն տաքացնելու գործիքներ, որոնց բաց կրակի կամ չեկացած մասերի վրա կարող է ընկնել պատահարար գոյացված ացետիլենը։

գ) այն շենքերում, որոնք ունեն բաց կրակով լուսավորություն (նավթի լամպեր և այլն)։

դ) այն շենքերում, որոնք ունեն էլեկտրական լուսավորություն, բայց էլեկտրոլամպերը չունեն հերմետիկ ապակե կալպակներ և բաց են մեկուսիչները և այլ էլեկտրական գործիքները։

37· Արգելվում է խտացրած ոդով, թթվածինով, ջրածինով, ացետիլենով և այլ գազագնդեր պահելը՝

ա) ջերմացման գործիքների մոտ։

բ) ջերմության այլ աղբյուրների մոտ։

գ) այն վայրերում, որոնք յենթակա են արևի խիստ ջերմության։

դ) թթվածնի, ջրածնի, ացետիլենի և այլ գազագնդերի միատեղ պահպանումը դյուրավառ գազերի հետ։

ե) ուղղակի դեմ անել պատին, առանց հատուկ բուրդեր պատրաստելու՝ պաշտպանելու համար նրանց վայր ընկնելուց, կամ վրան իրի հնարավոր հարվածներից։

Ծանոթություն.—Գազագնդերի (բալոնների) պահպանումը կատարվում է առանձին հատուկ շենքերում։

38· Արգելվում է պահել քարածուխը, կոքսը և տորֆը

ա) հրկիզվող շենքերից 15 մետրից և այլ շենքերից 10 մետրից ավելի մոտ տարածության վրա։

բ) դարսված քներով այնպիսի վայրերում, որտեղ նրանց տակ կարող է ջուր կուտակվել։

գ) յերբ դարսված քների լայնությունը 13 մետրից, յերկարությունը 35 մետրից և բարձրությունը 3 մետրից ավելի է։ Կոքսի համար թույլատրվում է մինչև 4 մետր բարձրություն։

դ) յերբ դարսված քների միջև արանքները 4 մետրից պակաս է։

ե) յերբ մշտական հսկողություն չկա դարսված քի դրության վրա։

39· Արգելվում է բուսական յուղերի գործածությունը մաքրելու ու յուղելու համար պահեստային շենքերում։

40· Արգելվում է շենքերում ու դարաժներում թողնել մաքրելու յուղոտ նյութեր (լաթեր, թելեր), որոնց համար պետք է ունենալ յերկաթե փակ արկղեր, այդ արկղերից բանվորական որվա վերջում պարբերաբար պետք է հավաքել, դուրս տանել այդ նյութերը։

41· Արգելվում է դյուրաբորբոք հեղուկների գործադրությունը վառարանները վառելու համար։

42· Արգելվում է վառարանների վրա կամ նրանց մոտերքում չորացնել փայտ, ածուխ, հագուստեղեն և այլ իրեր։

43· Արգելվում է աշխատանքները վերջացնելուց հետո թողնել էլեքտրոմոտորներն ու լուսավորությունը առանց մեկուսացնելու։

44· Արգելվում է պարանով կամ յերկաթալարով կապել ու այս կամ այն կողմը քաշել էլեքտրոլարերը։ Կախել էլեքտրոլարարերը մեխերի վրա· դիպցնել պլակատներին ու զարդարանքներին, կախել հագուստեղենը և այլ առարկաներ մեկուսիչների և էլեքտրական այլ գործիքների վրա· պատրաստել թղթի լուսամփոփներ կամ թղթով փաթաթել էլեքտրական լամպերը։

45· Արգելվում է դռների կամ լուսամուտների անցքեր ունենալ վերնահարկերի (չերդակների) հրեղահապաշտպան պարիսպների վրա։

Ծանոթություն.—Յեթե այդտեղ դուռ կամ լուսամուտ անհրաժեշտ է արտադրական ու ծառայության կարիքների համար, անհրաժեշտ է դռները պատել կավի մեջ խմած թաղիքով և ապա յերեսը յերկաթ քաշել, իսկ լուսամուտների համար անհրաժեշտ է ունենալ անկեղ փեղկեր։ Բացի դրանից, դռներն ու լուսամուտները պետք է ունենան ամուր փակող ավտոմատիկ փականներ։

IV. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՇԻՉ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

46· Հսկել հրդեհաշիջային ինվենտարի ու սարքավորման սարքին դրության վրա։

47· Կազմակերպել հրդեհաշիջային խումբ (դրուժինա) և նրա հետ վարել թեորետիկ և պրակտիկ պարապմունքներ։

48· Ճիշտ դասավորել հրդեհաշիջային ինվենտարը, որինակ՝ հրամարիչները, հրդեհաշիջային դուլլերը, կացինները, լինդերը և այլն։

49· Պարբերաբար, վոչ ուշ քան ամիսը մեկ անգամ, ստուգել էլեքտրո-

ՀՀ Ազգային գրադարան
NL0276708

13.957

ցանցի (էլեքտրոտեխնիկի հետ միասին) դրությունը և ծխնելույզների դրությունը (վառարանի վարպետի հետ միասին)։

50. Սովորեցնել զորամասի, հիմնարկի անձնական կազմին՝ ոգտվել հրդեհաշիջային ինվենտարից և սարքավորումից, ինչպես նաև սովորեցնել կանչել հրդեհաշիջային պահպանությունը։

51. Կազմակերպել հրդեհի տաղնապներ, վորպեսզի հրդեհաշիջային խումբն ու ամբողջ անձնական կազմը վարժվեն հրդեհների դեմ պայքարի յեղանակներին։

52. Հաշվի առնել և կազմել հրդեհաշիջային ինվենտարի պահանջագրեր և ստանալ այդ ինվենտարը բնակմասի պետի միջոցով։

53. Հսկել, վորպեսզի պահպանվեն զորամասում ու հիմնարկում հակահրդեհային ապահովության բոլոր միջոցները։

54. Կազմել հակահրդեհային պաշտպանության պլանը, վորով նախատեսվում է.

ա) հրդեհաշիջային կետերի դասավորելու տեղն ու նրանց սարքավորումը.

բ) հրդեհաշիջային խմբի դասավորելու տեղը, նրա թվական քանակը և ունեցած սարքավորումը.

գ) ջրի աղբյուրների դասավորելու տեղը՝ հրդեհի դեպքում նրանցից ոգտվելու համար.

դ) հրդեհի մասին աղդարարելու կարգն ու միջոցները.

ե) ընդհանուր տաղնապ տալու յեղանակը.

զ) հրդեհաշիջային խմբի և որապահ մասի հավաքման վայրը.

է) հրդեհաշիջային առաջին ոգնություն ցույց տալու յեղանակները՝ մինչև հրդեհաշիջային խմբի դալը.

ը) որվա վերակարգի անձանց և ամբողջ հրամատարական ու կարմիր բանակայինների կազմի պարտականությունները տաղնապի դեպքում.

թ) յեկած հրդեհաշեջ խմբերի դիմավորման կարգը.

ժ) հրդեհաշիջային խմբի գործողությունը տաղնապով, հավաքման կարգը և շարժումը դեպի հրդեհի վայրը, այս կամ այն շենքի հրդեհի ժամանակ հրդեհաշիջման տակտիկական յեղանակները։

ԲԳԴԵ ՀՐԴԵՀԱՇԻՋԱՅԻՆ ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ՝ ՊՈԼՈՍՈՒԽԻՆ

Գեհրատի Տպարան

Գրավոր 331 Տիրաժ 1000

ՀԱՍ. ՀԱՆ. ԳՐԱԴ. ԳՈՍԼ. ՀԱՍԱ. Հ. Ա. Հասանով Ի. ՍՏԱՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ